

–Գեղին վարժարանին համար քանի մը դուրուշ նուէր կու տա՞ք, աղա. ծառադ իմ վրաս առած եմ դպրոցին տնօրէնութիւնն եւ կը կառավարեմ:

–Թաղեցին ի՞նչ կ'ընէ:

–Թաղեցին ձուկ կրօնէ:

–Դպրոցն եկամուտ ունի՞:

–Ոչ, դպրոցը եկամուտ չունի, եւ առանց եկամուտի ալ շատ աղէկ կառավարուելու վրայ է... փառք Աստուծոյ, մենք եկամուտի պէտք չունինք:

–Առանց դրամի ի՞նչպէս կկառավարուի:

–Վարժապետներու ամսական չեմ տար:

–Լա՛ւ:

–Տնտեսի ալ ամսական չեմ տար:

–Շատ աղէկ:

–Թուղթի, գրիչի եւ մելանի ալ ստակ չեմ տար:

–Կեցցե՛ս:

–Փայտի ածուխի համար ալ բան մը չեմ վճարեր:

–Սքանչելի՛... գոնէ բոլոր վարժարաններու տնօրէնութիւնը դուն առնէիր վրադ:

–Հիմա, հարցուր ինձ, թէ ի՞նչպէս կը կառավարես:

–Հարցուցի:

–Հարցուցի ըսելով չըլլար, հարցո՛ւր:

–Շատ աղէկ, ի՞նչպէս կկառավարես:

–Ռոպէրթեան վարժարանի հայ ուսանողներէն մէկ քանին կու գան ձրիաբար դաս կու տան. է՛յ, ըսէ:

–Է՛յ:

–Տնտեսի համար պէտք չունիմ. աշակերտներն իրենց ուտելիքն ու խմելիքն իրենք կրերեն. է՛յ, ըսէ:

–Է՛յ:

–Թուղթը գրիչը եւ մելանը ասդիէն անդիէն կմուրամ. է՛յ, ըսէ:

–Է՛յ: